ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ճանապարհաշինական ծրագրեր

Հայաստանի ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը շուրջ 7513 կմ է: Ընդհանուր օգտագործման պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները, ըստ ֆունկցիոնալ նշանակության, բաժանված են՝ միջպետական նշանակության ճանապարհների (1753.12 կմ), հանրապետական նշանակության ճանապարհների (2000.11 կմ), տեղական նշանակության ճանապարհների (3760 կմ): Տեղական նշանակության ճանապարհներն իրենց հերթին, ըստ պատկանելության, բաժանվում են մարզային և համայնքային ճանապարհների:

ՀՀ պետական բյուջեի հատկացումներով իրականացվում են ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում և միջին նորոգում:

- 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով հանրապետությունում հիմնանորոգվել են մոտ 218.5կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ (միջպետական՝ 120,7կմ, հանրապետական՝ 79,3կմ, տեղական՝ 18,5կմ), որից 34.8կմ երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգումը մեկնարկել է 2020թ., աշխատանքներն ավարտվել են 2021թ.:
- 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել է 77.4կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների միջին նորոգում:
- ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2020թ. հանրապետությունում հիմնանորոգվել են շուրջ 242,5կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ (միջպետական՝ 110,3կմ, հանրապետական՝ 86,6կմ, տեղական՝ 45,6կմ), որից 2020թ.-ի վերջին շահագործման է ընդունվել մոտ 197կմ-ն: Մոտ 45կմ ճանապարհահատվածների շահագործման ընդունման գործընթացը կավարտվի 2021թ.:
- 2020թ. պետական բյուջեի միջոցներով կատարվել է մոտ 103կմ ճանապարհահատվածների միջին նորոգում:
- 2019 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվել են շուրջ 155կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհների հիմնանորոգման (միջպետական՝ 119կմ, հանրապետական՝ 14,8կմ, տեղական՝ 19,2կմ):

- 2019թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել են մոտ 131,5կմ ընդհանուր երկարությամբ միջպետական նշանակության ավտոճանապարհների միջին նորոգման աշխատանքներ:
- 2018թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով հանրապետությունում հիմնանորոգվել են մոտ 73,6կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհներ:
- 2018թ. կատարվել է 48,2կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների միջին նորոգում: